ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նոր հասարակարգի կառուցումը հնարավոր չէ պատկերացնել առանց մարդու հոգևոր վերափոխման։ Ինչպես ընդգծվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումում, «նոր մարդու ձևավորումը կոմունիստական շինարարության ոչ միայն կարևորագույն նպատակն է, այլև անկապտելի պայմանը»[1]։

Անհատական և հասարակական շահերի սկզբունքային հակասությունների վերացումը և դրանց ռացիոնալ զուգակցումը մեր երկրում անձնավորության սոցիալիստական տիպի ձևավորման օբյեկտիվ տնտեսական հիմքն է։ Սակայն մեզ մոտ դեռևս կան առանձին անհատներ, որոնք իրենց գործունեության մեջ շեղվում են սոցիալիստական համակեցության նորմերից։ Այս տեսակետից «պարզ է դառնում առանձին անձանց դաստիարակելու, իսկ երբեմն նաև վերադաստիարակելու, սոցիալիստական իրավակարգի, մեր կոլեկտիվիստական համակեցության նորմերի նկատմամբ ոտնձգությունների դեմ պայքարելու աշխատանքի անհրաժեշտությունը»[2]։ Դաստիարակության գործը գիտականորեն կազմակերպելու, ինչպես նաև հասարակայնորեն անհրաժեշտ վարքագծից շեղումների պատճառները հայտնաբերելու և վերացնելու համար չափազանց կարևոր է բացահայտել այն գործոնների դերն ու նշանակությունը, որոնց ազդեցության տակ ձևավորվում է մարդը։ Այդ գործոնների մեջ էական են հաղորդակցման պրոցեսները։

Անձի վարքագծի սոցիոլոգիական ուսումնասիրությունն անհրաժեշտորեն ենթադրում է մարդկանց միջև եղած հասարակական հարաբերությունների օբյեկտիվ համակարգի վերլուծություն։ Այլ կերպ մարդու հասարակական էությունը հնարավոր չէ ըմբռնել։ Սակայն որոշակի խնդիրների լուծման համար դա դեռևս բավական չէ։ Մարդկանց պրակտիկ գործունեության կազմակերպման ու գիտական կառավարման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել նաև հասարակական հարաբերությունների և մարդկանց գործունեության ձևերի անձնավորման պրոցեսներն անհատական վարքի մեջ։ Քանի որ անձի սոցիալական վարքի դետերմինավորման մեջ կարևոր դեր են խաղում նրա ներքին, սուբյեկտիվ հատկությունները, այդ պատճառով էլ վարքի ուսումնասիրման համար անհրաժեշտ է հետազոտել նաև հաղորդակցման հարաբերությունները, քանզի այդ որակները ձևավորվում և արտահայտվում են հաղորդակցման մեջ։

Ինչպես հասարակության, այնպես էլ առանձին անհատների զարգացման պրոցեսում հաղորդակցումը կարևոր տեղ է գրավում։ Այն անձի ձևավորման և նրա վարքի դետերմինավորման կարևորագույն պայմաններից է։ Մարդկանց հասարակական կյանքը, նրանց համատեղ գործունեությունն անհնար է առանց հաղորդակցման։ Միայն վերջինիս միջոցով կարող է իրականացվել առանձին անհատների բազմակողմանի փոխազդեցությունը և փոխըմբռնումը։ Հաղորդակցումն ամեն մի գործունեության անհրաժեշտ և էական հիմքն է։ Նրա շնորհիվ մարդիկ իրենց աշխատանքում հասնում են փոխըմբռնման, կազմակերպվածության, փոխանակում են աշխատանքային գործունեության համար

---

1 «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը, 14—15 հունիսի, 1983 թ.», Երևան, 1983, էջ 31։

2 Յու. Վ. Անդրոպով, Կարլ Մարքսի ուսմունքը և ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության մի քանի հարցեր («Լենինյան ուղիով», 1983, № 3, էջ 14)։

անհրաժեշտ իրենց դիրքորոշումները, արժույթային կողմնորոշումները և հրմտությունները։ Ինչպես նշել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, «քանի որ պահանջմունքները, այսինքն նրանց բնույթը և բավարարման եղանակները անհատներին միշտ կապել են իրար հետ (հարաբերությունները սեռերի միջև, փոխանակությունը, աշխատանքի բաժանումը), ապա նրանց անհրաժեշտ է եղել միմյանց հետ մտնել հարաբերությունների մեջ»[3], այսինքն՝ հաղորդակցվել։ Հաղորդակցումը ինչպես գիտակցության, այնպես էլ ինքնագիտակցության ձևավորման կարևորագույն պայմաններից է։ Հաղորդակցման պրոցեսում իրագործվում է ոչ միայն մյուս մարդկանց ճանաչումը, այլև ինքնաճանաչումը։ Կ. Մարքսը նշել է, որ «մարդը սկզբում իր պատկերը մի ուրիշ մարդու մեջ է տեսնում, որպես հայելիում։ Միայն Պողոս կոչված մարդուն՝ որպես իր նմանին վերաբերվելով է, որ Պետրոս անունով մարդը սկսում է իրեն իբրև մարդու վերաբերվել»[4]։

Հաղորդակցումը մարդկանց հարաբերությունների ձևերից է, սոցիալ-հոգեբանական փոխազդեցության պրոցես, որի հետևանքով իրականացվում է սոցիալական փորձի փոխանակումը։ «Հաղորդակցման պրոցեսը մարդկանց փոխազդեցության մի այնպիսի ձև է, որտեղ վերջիններս (մարդիկ—Ա. Խ.) մեկը մյուսի նկատմամբ հանդես են գալիս միաժամանակ (կամ հաջորդաբար) և՛ որպես օբյեկտներ, և՛ որպես սուբյեկտներ»[5]։ Ի տարբերություն մարդու գործունեության մյուս ձևերի, հաղորդակցման առանձնահատկությունն այն է, որ այստեղ դրսևորվում են մարդկանց հոգեբանական որակները։ Պատահական չէ, որ հենց հաղորդակցման պրոցեսում են ձևավորվում անձի սոցիալական հոգեբանության հիմնական բաղադրիչները։

Հաղորդակցումը չի կարելի դիտարկել գոյություն ունեցող օբյեկտիվ հասարակական հարաբերություններից մեկուսացված ձևով։ Իհարկե, այն, որպես այդ հարաբերությունների անհատականացված ձև, օժտված է որոշակի հարաբերական ինքնուրույնությամբ։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ երբեմն «հաղորդակցման ձևերը, նրա արժույթներն ու նորմերը մի անգամ ծագելով՝ կարող են պահպանվել և վերարտադրվել նույնիսկ այն ժամանակ, երբ անհետացել են նրանց ծնող հասարակական հարաբերությունները»[6]։ Բայց վերջին հաշվով հաղորդակցումը պայմանավորված է կոնկրետ հասարակական հարաբերությունների համակարգով։ Հաղորդակցման ցանկացած ձև գոյություն ունեցող օբյեկտիվ հասարակական հարաբերությունների կոնկրետ դրսևորումն է։ Բանն այն է, որ հասարակական կյանքի հիմքում ընկած է նյութական բարիքների արտադրությունը, որը և մարդկանց գործունեության հիմնական ոլորտն է։ Նրա հիման վրա ծագում և զարգանում են մարդկային գործունեության մյուս բոլոր ձևերը, այդ թվում և հաղորդակցումը։ Ինչպես հաղորդակցման բնույթը, այնպես էլ նրա դրսևորման ձևերը պայմանավորված են տվյալ արտադրական հարաբերությունների բնույթով։ Անտագոնիստական ֆորմացիաներում հաղորդակցման ձևերի մեջ նկատվում է անձի ներքին մասնատվածություն, մարդկանց ինքնամփոփվածություն և այլն։ Ընդգծելով հաղորդակցման ձևերի և բնույթի կախվածությունը օբյեկտիվ հասարակական հարաբերություններից՝ մարքսիզմը միաժամանակ գտնում է, որ այդ հարաբերությունները չեն կարող գոյություն ունենալ հաղորդակցման պրոցեսից դուրս։ Արտադրական հարաբերությունները չեն կարող գոյություն ունենալ անհատների փոխադարձ հարաբերություններից դուրս, որովհետև «անհատների հենց անձնական, անհատական հարաբերությունը մեկը մյուսի նկատմամբ, նրանց, որպես անհատների; փոխադարձ հարաբերությունն է ստեղծել և շարունակ

---

[3] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 3, с. 439.

[4] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 60։

[5] В. Вичев, Мораль и социальная психика, М., 1978, с. 50.

[6] Л. П. Буева, Общественные отношения и общение («Методологические проблемы социальной психологии», М., 1975, с. 149).

վերստեղծում է գոյություն ունեցող հարաբերությունները»[7]։ Այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, հասարակական հարաբերությունները կազմվում են առանձին անհատների գործողություններից[8]։ Նշանակում է առանց հաղորդակցման հնարավոր չէ ոչ միայն անձի ձևավորումը և զարգացումը, այլև սոցիալական խմբերի, ինչպես նաև հասարակության գոյությունն ամբողջությամբ։ Դեռ ավելին, հաղորդակցումն ինքը հանդես է գալիս որպես հասարակական հարաբերության իրականացման պրոցես։

Հասարակական կյանքում հաղորդակցումը կատարում է տարբեր ֆունկցիաներ։ Բ. Լոմովն առանձնացնում է այդ ֆունկցիաների երեք հիմնական կարգեր. տեղեկատու-հաղորդակցական, կարգավորական-հաղորդակցական և ներգործուն-հաղորդակցական[9]։ Ըստ Բ. Պարիգինի, հաղորդակցման ֆունկցիաները մարդկային էության դրսևորման եղանակ են, մարդու լինելիության և հանրության գոյության գործոն[10]։ Ելնելով սովետական գրականության մեջ եղած հաղորդակցման ֆունկցիաների դասակարգումներից՝ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ֆունկցիաները. սոցիալ-գործնական (նկատի է առնվում մարդկանց համատեղ գործունեության համաձայնեցումը), իմացաբանական և տեղեկատու (մարդկանց հոգևոր գործունեության արդյունքների փոխանակումը), սոցիալականացնող, արժույթա-կողմնորոշումային և, վերջապես, սոցիալ-հսկողական։ Քանի որ հաղորդակցումը, որպես մարդկանց փոխազդեցության ձև, որոշվում է հասարակական հարաբերությունների համակարգի բնույթով, ապա անհրաժեշտ է նշել, որ հաղորդակցման ցանկացած դրսևորում իրագործվում է պատմականորեն կոնկրետ և սոցիալականորեն պայմանավորված հաղորդակցման ձևերին համապատասխան և կարգավորվում է հասարակական վարքագծի նորմերով։ Բայց քանի որ հաղորդակցումը գոյություն ունեցող օբյեկտիվ հասարակական հարաբերությունների մեխանիկական արտացոլումը չէ, այլ օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ, այդ իսկ պատճառով այն հանդես է գալիս նաև որպես անձի սոցիալական վարքի դետերմինավորման կարևորագույն պայման, որի մեջ էլ հենց դրսևորվում է հաղորդակցման սոցիալ-հսկողական ֆունկցիան։ Հաղորդակցման միջոցով հասարակությունն իր անդամներին փոխանցում է վարքի որոշակի նորմեր, որոնք նրանց գործունեության մեջ դառնում են ղեկավարող սկզբունքներ, խրախուսում է հասարակայնորեն օգտակար վարքագիծը և դատապարտում հակահասարակական արարքները։ Դեռ ավելին, հաղորդակցումը կարելի է դիտել որպես «մարդկանց վարքի հարաբերականորեն ինքնուրույն և արտակարգ կարևոր հատուկ ձև»[11]։ Դրա համար էլ հաղորդակցման կարևորագույն ֆունկցիաներից մեկը նրա յուրահատուկ կարգավորիչ ֆունկցիան է։

Հաղորդակցումն ունի կոնկրետ պատմական բնույթ, այդ պատճառով էլ որպես սոցիալական երևույթ նրա բովանդակությունը և դերը հասարակական զարգացման պրոցեսում փոփոխվում են։ Հասարակական կյանքի զարգացման հետ զուգընթաց փոխվում են նաև հաղորդակցման ձևերը, բայց ինչպես էլ որ փոփոխվեն, դրանց միշտ կարելի է հանգեցնել երկու տեսակի. անմիջական և միջնորդավորված շփման։ Իսկ ինչպիսի՞ն է հաղորդակցման այս երկու ձևերի դերը անձի վարքի դետերմինավորման գործում։

Անմիջական հաղորդակցումը սոցիալ-հոգեբանական երևույթ է և մարդկանց վարքագծի վրա միշտ թողնում է ուղղակի ազդեցություն։ Անմիջական

---

7 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Соч., т. 3, с. 440.

8 Վ. Ի. Լենին, Երկ, էջ 514—515։

9 Б. Ф. Ломов, Общение и социальная регуляция поведения индивида («Психологические проблемы социальной регуляции поведения», М., 1976, с. 85).

10 Б. Д. Парыгин, Основы социально-психологической теории, М., 1971, с. 205—213.

11 В. М. Соковин, Общение и его средства («Сознание и общение», Фрунзе, 1968, с. 8).

շփման (միջանձնային հաղորդակցում) էական կողմն այն է, որ որոշակի հասարակական ֆունկցիաների կատարման պրոցեսում այս կամ այն վարքագծի ընտրությունն իրագործվում է այլ մարդկանց ազդեցության տակ։ Ինչպես ամեն մի հասարակական ազդեցություն, այնպես էլ հաղորդակցման կարգավորիչ ազդեցությունն իրականացվում է անձի շարժառիթային ոլորտի, նրա ներքին որակների (կողմնորոշումների, համոզմունքների, պահանջմունքների, նպատակների և այլն) փոփոխման ուղիով։ Նման փոփոխությունը, ինչպես իրավացիորեն նշվում է մարքսիստական գրականության մեջ, անհնար է իրագործել հրահանգների և տեղեկությունների միջոցով. «Ոչ թե բանավոր խրատները, այլ միայն անհատի՝ ռեալ գործունեության մեջ ընդգրկվելն է հնարավորություն տալիս լուծելու այդ խնդիրը»[12]։ Որքանով որ ռեալ գործունեության մեջ անհատի ընդգրկումն անհնար է պատկերացնել անմիջական հաղորդակցման պրոցեսից դուրս, ապա վերջինս պետք է դիտել որպես անձի վարքի դետերմինավորման կարևորագույն լծակներից մեկը։

Անմիջական շփման էական գծերից մեկն այն է, որ տվյալ անձը մշտապես կողմնորոշվում է դեպի իրեն շրջապատող մարդիկ, որոնց արարքները և կարծիքները հանդես են գալիս որպես անձի վարքը կարգավորող գործոն։ Այդ պատճառով ամենօրյա հաղորդակցման պրոցեսում անհատն իր արարքները համակերպում է այն սոցիալական խմբի արժույթների և սպասելիքների հետ, որին նա պատկանում է անմիջականորեն։ Իսկ երբ անձի վարքը հակասում է այդ սպասելիքներին, ապա դա կարող է առաջ բերել համապատասխան բացասական ռեակցիա և հիմք դառնալ լարվածության ու կոնֆլիկտների համար։

Հաղորդակցման ոլորտում առանձին անհատներն իրար հետ կապված են շահերի, ճաշակների, գնահատականների և հակումների ընդհանրության վրա հիմնված համակրանքի զգացումով։ Վարքագծի նորմերի, հակումների, արժույթային կողմնորոշումների միասնությունն էլ հենց այն հիմքն է, որը հնարավոր է դարձնում ընդհանուր նպատակներով և խնդիրներով կապված անհատների փոխադարձ հաղորդակցումը։ Ընդ որում, անհատը վարքագծի նորմերը վերցնում է ոչ թե պասիվ դիտարկման, այլ հաղորդակցման ոլորտի մյուս անդամների հետ ունեցած ակտիվ փոխազդեցության շնորհիվ։

Հաղորդակցման մեջ մտնելով, անհատն իրեն համեմատում է մյուս մարդկանց հետ և ինքն աստիճանաբար ու աննկատելիորեն սկսում «վարակվել» հաղորդակցման տվյալ ոլորտում տիրապետող մթնոլորտով ու իրեն պահում է իր ամենօրյա վարքագծին ոչ հատուկ ձևով։ Դա տեղի է ունենում կոնֆորմիստական, այսինքն՝ վարքի այնպիսի սոցիալ-հոգեբանական մեխանիզմի գործողության հետևանքով, որը թելադրվում է անձի՝ սոցիալական խմբի (հաղորդակցման ոլորտի) պահանջներին հարմարվելու ձգտմամբ։ Դա հետապնդում է մյուս մարդկանց բացասական վերաբերմունքից խուսափելու նպատակ։ Ամբողջ հարցն այն է, որ հաղորդակցումը մարդկանց կենսագործունեության աղբյուրն ու նախադրյալն է և պայմանավորված է կենսական անհրաժեշտությամբ։ Այդ հանգամանքը երբեմն անձին ստիպում է հաղորդակցվել մյուս մարդկանց հետ, նույնիսկ եթե նրանց նկատմամբ նա ունի բացասական վերաբերմունք։ Սակայն դա միշտ այդպես չէ։ Միջանձնային հաղորդակցումը, որպես կանոն, այս կամ այն չափով ազատ ընտրության արդյունք է։ Այդ պատճառով էլ մարդու վարքը հաղորդակցման պրոցեսում որոշվում է գլխավորապես գիտակցված շարժառիթներով և հակումներով։ Հաղորդակցման պրոցեսում անձի վարքը որոշվում է ոչ միայն շրջապատող մարդկանց անմիջական ազդեցությամբ, այլև հաղորդակցման տվյալ միջավայրում ընդունված նպատակներով, գործունեության խնդիրներով, նրա (միջավայրի) կայուն արժույթային կողմնորոշումներով։ Իհարկե, անձն ազատ չէ հույզերի ազդեցությունից, սակայն, ընտրելով այս կամ այն վարքագիծը, նա սովորաբար հաշվի է առնում իր արարքների հնարավոր հետևանքները։

---

12 «Социальная психология», М., 1975, с .231.

Շնորհիվ այն բանի, որ անձը մտնում է հաղորդակցման մեջ՝ ունենալով մինչ այդ արդեն ձևավորված որոշակի նպատակներ, վարքագծի նորմեր, պահանջմունքներ և այլն, նա ոչ միայն հարմարվում է հաղորդակցման տվյալ միջավայրի պահանջներին, այլև ինքն է ազդում շրջապատի մարդկանց վրա՝ ներկայացնելով իր հավակնությունները։ Անձը ոչ միայն ձգտում է համերաշխության, իր արարքների հավանությանը, այլև ինքն է գնահատում և հավանություն տալիս իր ընկերների գործունեությանը, նրանցից տեղեկություններ պահանջում նրանց հետագա գործողությունների մասին։ Հենց դրա մեջ էլ դրսևորվում է անձի ակտիվությունը հաղորդակցման պրոցեսում։

Քանի որ հաղորդակցումը տվյալ հասարակության մեջ տիրապետող սոցիալական հարաբերությունների ռեալ կեցությունն է և, հետևաբար, բովանդակում է այդ հասարակության սոցիալ-տիպական գծերը, ուստի այն հանդես է գալիս որպես մարդու համանման հատկանիշների ձևավորման կարևորագույն մեխանիզմ։ Սակայն հաղորդակցման ֆունկցիան դրանով չի սահմանափակվում. այն հանդես է գալիս նաև որպես անձի անհատական գծերի ձևավորման մեխանիզմ։ Եվ այս վերջին ֆունկցիան պակաս կարևոր չէ, որովհետև մարդու անհատականության ձևավորման հետևանքով միայն կարելի է հասնել ցանկալի նպատակին՝ կենսականորեն ակտիվ անձնավորության ձևավորմանը։

Տվյալ սոցիալական խմբում անձի վարքը բնորոշող բոլոր անհատական գծերն այսպես թե այնպես ձևավորվում են մարդկանց միջանձնային հաղորդակցման պրոցեսում։ Հաղորդակցումը հասարակական հարաբերությունների ռեալիզացման ձև է, և նրանից դուրս հնարավոր չէ պատկերացնել անձի ձևավորման պրոցեսը։ Դա նշանակում է, որ անձի անհատական գծերի ձևավորումը պետք է դիտել որպես հաղորդակցման պրոցեսի անհրաժեշտ հետևանք։ Ձևավորվելով հաղորդակցման պրոցեսում, անձի անհատականությունն իր հերթին հանդես է գալիս որպես մարդու վարքի ինքնադետերմինավորման կարևորագույն գործոն։ Մարդը, կախված իր սոցիալական դերից, զանազան իրավիճակներում իրեն պահում է տարբեր ձևով։ Բայց դրա հետ մեկտեղ նա մշտապես մնում է ինքն իր հետ։ Դա բացատրվում է նրանով, որ անհատը հաղորդակցվելով մյուս մարդկանց հետ, իր գործունեության մեջ առաջնորդվում է ելնելով ոչ միայն շրջապատի մարդկանց սպասելիքներից, այլև դրսևորում է իր անհատականությունը, որի մեջ էլ հենց արտահայտվում է ժառանգականությունը անձի վարքում։ Միջանձնային հաղորդակցումը մարդկանց հուզական հարաբերությունների ոլորտն է, և այդ պատճառով էլ նրանց միջև փոխազդեցությունն իրականացվում է հենց մարդկանց անհատական որակների շնորհիվ։

Հաղորդակցման պրոցեսում փոխադարձ ազդեցության աստիճանը շատ բանով կախված է անհատների փոխհարաբերությունների բնույթից և մակարդակից։ «Երբ մենք ուսումնասիրում ենք կոնկրետ անհատի ապրելակերպը,— գրել է Բ. Լոմովը,— մենք չենք կարող սահմանափակվել միայն այն բանի վերլուծությամբ, թե ինչ և ինչպես է նա անում, մենք պետք է հետազոտենք նաև այն, թե ում հետ և ինչպես է նա հաղորդակցվում, այսինքն՝ հաղորդակցման այն ոլորտը և եղանակները, որոնց մեջ ներգրավված է նա»[13]։ Ահա թե ինչու անձի վարքն ըմբռնելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ուսումնասիրել այն սոցիալական խմբերը, որոնց նա պատկանում է, նրա մասնակցության աստիճանն այդ խմբերի գործունեությանը, ինչպես նաև այդ խմբերին բնորոշ արժույթների և չափանիշների համակարգը։ Մենք միայն այդ դեպքում կարող ենք ինչ որ չափով դատել անձի հնարավոր վարքի մասին՝ որոշակի իրավիճակներում։ Անձի վրա հաղորդակցման պրոցեսի ունեցած ազդեցության արդյունավետությունը կախված է նաև շրջապատող մարդկանց ազդեցության

---

[13] Б. Ф. Ломов, Общение как проблема общей психологии («Методологические проблемы социальной психологии», М., 1975, с. 130).

ընկալման նկատմամբ անհատի ունեցած նախատրամադրվածությունից, համապատասխան տեղեկություններ ստանալու և հուզող պրոբլեմների լուծման մեջ նրա ունեցած շահագրգռվածությունից։

Այսպիսով, թեև մարդկանց անմիջական հաղորդակցումը չափազանց կարևոր է և անհրաժեշտ, բայց այն ունի որոշակի սահմանափակություն։ Բանն այն է, որ անմիջական շփման դեպքում մարդը չի կարողանում դուրս գալ միկրոմիջավայրի շրջանակներից։ Իսկ միկրոմիջավայրը չի կարող լինել անձի ձևավորման հիմնական գործոն, թեպետ նրա բնույթը և, հետևաբար, մարդկանց սոցիալական հոգեբանության մեջ նրա արտացոլման առանձնահատկությունները կախված են, վերջին հաշվով, ընդհանուր հասարակական հարաբերություններից։ Ուղղակի հաղորդակցումը մարդուն հնարավորություն չի տալիս ճանաչելու իր հասարակական կյանքը և նրա օրինաչափությունները, տիրապետելու հասարակության կողմից ստեղծված հոգևոր արժեքները, գնահատելու իրեն՝ որպես որոշակի սոցիալական հանրության մասնիկ։ Անմիջական հաղորդակցման շնորհիվ մարդը ճանաչում է միայն շոշափելիորեն ընկալվող երևույթները, իրավիճակները, փաստերը և յուրացնում միայն իրեն անմիջականորեն շրջապատող մարդկանց գիտելիքները, փորձը, հմտությունները և այլն։

Մարդկանց կենդանի փոխազդեցությունը թեև ընթանում է պատմականորեն կայուն հասարակական միջավայրի շրջանակներում, բայց չի հանգեցվում այդ միջավայրին, չի սպառվում նրանով։ Միջանձնային հաղորդակցման պրոցեսում անձը մնում է անմիջական սոցիալական միջավայրի (կոլեկտիվ, ընտանիք, հարևաններ և այլն) շրջանակներում՝ չբարձրանալով սոցիալական մակրոմիջավայրի մակարդակ։ Անմիջական շփման օգնությամբ անձը չի կարող վերստեղծել դասակարգի, ողջ հասարակության ամբողջական նկարագիրը և այդ պատճառով էլ մնում է աշխատանքային, կենցաղային, ընտանեկան, անձնական ամենօրյա պրոբլեմների շրջանակներում։ Բացի այդ, ժամանակակից պայմաններում, երբ հասարակությանը խիստ բնորոշ է հարաշարժությունը, մարդը ավելի շատ է կախված միջնորդավորված ուղիների միջոցով հաղորդվող տեղեկություններից։

Անմիջական հաղորդակցման սահմանափակությունը հաղթահարվում է հաղորդակցման այլ, այն է՝ միջնորդավորված ձևի միջոցով, որը գրականության մեջ ընդունված է անվանել մասսայական հաղորդակցում։ Վերջինս մարդկանց միջնորդավորված փոխազդեցությունն է հասարակական մակրոմիջավայրի մակարդակով, այսինքն՝ հաղորդակցման այնպիսի ձևը, որի դեպքում բացակայում է անմիջական անձնական շփումը։ Սոցիալական կյանքի բարդացումը, բնակչության թվաքանակի ավելացումը, ինֆորմացիայի աճող ծավալը և հասարակական հարաբերությունների զարգացումն ամբողջությամբ պայմանավորում են մասսայական հաղորդակցման անհրաժեշտությունը։ Մասսայական հաղորդակցման միջոցների (ռադիո, կինո, հեռուստատեսություն և այլն) լայն տարածումը հսկայական չափով արագացրել է ինֆորմացիայի փոխանակության պրոցեսները, որի շնորհիվ հասարակական համակեցության նորմերը արագ և արդյունավետ հասցվում են առանձին անհատների գիտակցությանը և ապահովում նրանց միավորումը հասարակական մեկ ամբողջի մեջ։ Եթե անմիջական հաղորդակցումն ուղղված է առանձին անհատների, նրանց վարքի և գործունեության ձևավորմանն ու փոփոխությանը, ապա մասսայական հաղորդակցման առանձնահատկությունն այն է, որ նա ուղղված է դեպի սոցիալական հանրությունը և նպատակ է հետապնդում ձևավորել այս կամ այն անհատի վարքագիծը տվյալ սոցիալական հանրության բոլոր անդամների համատեղ գործունեության պրոցեսում։ Մասսայական հաղորդակցման միջոցների օգնությամբ անձը ստանում է ընդհանուր սոցիալական միջավայրի հետ փոխազդեցության մեջ մտնելու հնարավորություն, ընդգրկվում է հասարակական բոլոր հարաբերությունների ամբողջության մեջ։

Դրա շնորհիվ մարդը հարստացնում և զարգացնում է իր սոցիալական փորձը՝ հաղթահարելով իր հոգևոր ուժերի սահմանափակվածությունը։

Մասսայական հաղորդակցման միջոցով հասարակությունը ձգտում է կարգավորել մարդկանց վարքը, հասնել հասարակության բոլոր անդամների գաղափարական ու սոցիալ-հոգեբանական ընդհանրությանը։ Ահա թե ինչու մասսայական հաղորդակցումը միշտ ունի նպատակասլաց և պլանավորված բնույթ։ Միջնորդավորված հաղորդակցման շնորհիվ մարդը հնարավորություն է ստանում շփման մեջ մտնելու տարբեր ազգերի, մասնագիտությունների, գաղափարական համոզմունքների տեր մարդկանց հետ։ Ի տարբերություն անմիջական շփման, մասսայական հաղորդակցման շնորհիվ, մենք կարճ ժամանակի ընթացքում կարող ենք ստանալ և հաղորդել մեծ քանակի տեղեկություններ։ Սակայն մասսայական հաղորդակցումը չի կարելի դիտել որպես սոսկ ինֆորմացիայի փոխանակության և տեխնիկական միջոցների օգնությամբ հասարակության տարբեր անդամների միջև սոցիալական կապերի հաստատման պրոցես։ Իհարկե, առանց ինֆորմացիայի փոխանակման մասսայական հաղորդակցում չի կարող լինել։ Դեռ ավելին, մասսայական հաղորդակցումը ոչ այլ ինչ է, քան ինֆորմացիայի փոխանակման պրոցես։ Բայց ինֆորմացիայի փոխանակումն ինքնանպատակ չէ։ Այն ունի որոշակի սոցիալական ֆունկցիաներ, որոնք հիմնականում բաժանվում են չորս խմբի. 1) գիտելիքների տարածում իրականության վերաբերյալ, 2) սոցիալական կարգավորում և կառավարում, 3) կուլտուրայի տարածում և 4) զվարճություն[14]։ Բայց մասսայական հաղորդակցման միջոցների օգնությամբ տարածվող ինֆորմացիան ինչքան էլ որ հարուստ և բազմաբնույթ լինի, ինչքան էլ որ բազմապլան լինեն նրա կոնկրետ խնդիրները, բոլոր դեպքերում դրանք վերջին հաշվով հետապնդում են մեկ նպատակ՝ մարդկանց հայացքների, կարծիքների, համոզմունքների, կողմնորոշումների, գաղափարաքաղաքական, բարոյական և այլ զգացմունքների վրա ազդելը և դրա հիման վրա՝ առանձին անհատների վարքագծի հասարակայնորեն ցանկալի շարժառիթների ձևավորումը։ Այդ պատճառով էլ մասսայական հաղորդակցման գլխավոր հասարակական ֆունկցիան, մեր կարծիքով, մարդկանց գործունեության կառավարումն է՝ հասարակության կողմից մշակված վարքագծի սկզբունքներին և նորմերին համապատասխան։

Եթե անմիջական շփման պրոցեսում անձը իր գործունեությունը կարգավորում է վարքագծի խմբային նորմերին համապատասխան, ապա մասսայական հաղորդակցման հետևանքով մարդը յուրացնում է նաև այն նորմերը, սկզբունքներն ու կանոնները, որոնց օգնությամբ նա պետք է կազմակերպի իր վարքագիծը՝ ելնելով ողջ հասարակության շահերից։ Որպես անձի սոցիալականացման պրոցեսի կարևորագույն մոմենտ, մասսայական հաղորդակցումն ազդում է նրա միասնական ներքին կառուցվածքի ձևավորման և դրա շնորհիվ՝ նաև սոցիալական վարքի վրա։ Այստեղ խոսքը չի վերաբերում սոսկ որոշակի ծավալ ու բովանդակություն ունեցող ինֆորմացիայի հաղորդմանը և յուրացմանը։ Բանն այն է, որ մասսայական ինֆորմացիան ունի ոչ միայն ճանաչողական, այլև երևույթների գնահատման, արժեքավորման ֆունկցիա։ Այն վերաբերում է նաև մարդու հոգեկանի կառուցվածքին և նրա վարքագծի շարժառիթային կողմերին։ Դա նշանակում է, որ հաղորդակցման մասսայական միջոցների օգնությամբ կատարվող ինֆորմացիայի փոխանակությունը գաղափարական համոզմունքների ձևավորման և նրանց՝ վարքագծի դրդապատճառների վերածման շատ բարդ պրոցես է։ Մասսայական միջոցների օգնությամբ ինֆորմացիայի հաղորդումը չի կարելի դիտել որպես մեկուսացված, ինքնուրույն պրոցես։ Անհրաժեշտ է նշել, որ հաղորդակցման անմիջական և միջնորդավորված ձևերը սերտորեն կապված են։ Այդ պատճառով, ինչպես ի-

---

[14] «Социальная психология», с. 170.

բավացիորեն նշում է Բ. Պարիգինը, «անմիջական հոգեկան շփումը չի կարելի դիտել բազմակիորեն միջնորդավորված սոցիալական կապերի և հարաբերությունների կոնտեքստից դուրս»[15]։

Անմիջական անձնական կապերը հաղորդակցման միջնորդավորված ձևերի նկատմամբ թեև գրավում են ենթարկյալ դիրք, սակայն դրանց տարրերն իրենց նշանակությունը պահպանում են նաև միջնորդավորված հարաբերությունների դեպքում։ Բանն այն է, որ չնայած հաղորդակցման միջնորդավորված ձևերը մարդու սոցիալականացման կարևորագույն միջոցներն են, այնուամենայնիվ, չի կարելի մոռանալ, որ դրանք, ինչպես և անմիջական շփումը, վերջին հաշվով, հարաբերություններ են անձնավորությունների միջև, այսինքն՝ արդեն ձևավորված հոգեբանական դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների, նորմերի, որոշակի գիտելիքների և շահերի տեր մարդկանց միջև։ Միջնորդավորված ճանապարհով ստացած ցանկացած ինֆորմացիա մարդը միշտ հարաբերում է մյուս մարդկանց կարծիքների, գնահատականների հետ, և դա երբեմն որոշում է անհատի վերաբերմունքը ստացված ինֆորմացիայի նկատմամբ։ Այլ կերպ ասած, ինֆորմացիան մարդուն հասնում է ոչ թե ուղղակիորեն, այլ բեկվում է անձնավորության հոգևոր աշխարհում և միջնորդավորվում խմբային նորմերով։ Որպես կանոն ընկալվում և յուրացվում է միայն այն ինֆորմացիան, որը համապատասխանում է խմբային նորմերին և դիրքորոշումներին։ Անձնավորությանն ընդհանրապես բնորոշ է այն, որ նա իր ստացած ինֆորմացիան գնահատում է իր պահանջմունքների, հույզերի, նախորդ փորձի տեսանկյունից։ Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, այն դեպքերում, երբ «հաղորդակցվողի կարծիքը հակասում է խմբակային դիրքորոշումներին, մարդը պարզապես չի ընկալում հաղորդողի տեսակետը»[16]։

Հաղորդակցման մասսայական միջոցների օգնությամբ ինֆորմացիայի հաղորդումը բարդ և բազմակողմանի պրոցես է։ Նրա արդյունավետությունը կախված է շատ գործոններից, որոնք, մեր կարծիքով, հիմնականում կարելի է դիտարկել հետևյալ տեսանկյուններից. 1) մասսայական հաղորդակցման միջոցներն ինչպես են նպաստում զարգացման տվյալ փուլում հասարակության կողմից առաջ քաշված խնդիրների իրականացմանը, 2) ինչպիսին է լսարանի վերաբերմունքը ստացված ինֆորմացիայի նկատմամբ, 3) ինչպիսին է մասսայական ինֆորմացիայի՝ կյանքի իրադարձություններին միջամտելու արդյունքը և ինչ տպավորություն է թողնում՝ այդ միջամտությունը հասարակական կարծիքի վրա, ինչպես է մոբիլիզացնում այն (հասարակական կարծիքը) կյանքի դրական երևույթների ամրապնդման գործում կամ պայքարի մղում հակահասարակական երևույթների դեմ։ Առաջին ասպեկտի դեպքում արդյունավետությունը բնորոշվում է այնպիսի հատկանիշով, ինչպիսին հաղորդակցման մասսայական միջոցների՝ հասարակության առաջ քաշած հրատապ պրոբլեմների բնագավառում ծավալած աշխատանքի գործնականությունն է։ Երկրորդ դեպքում՝ մասսայական հաղորդակցման արդյունավետությունը կախված է լսարանի՝ հաղորդվող ինֆորմացիայի ընկալման մեջ ունեցած շահագրգռվածությունից։ Եվ երրորդում՝ մասսայական ինֆորմացիայի արդյունավետությունն ապահովվում է միայն այն դեպքում, երբ մասսայական հաղորդակցման միջոցներն ինֆորմացիան ընդունողների հասարակական և անձնական հարցերի վերաբերյալ քննադատական դիտողություններին անդրադառնում են ժամանակին։

Այսպիսով, մասսայական հաղորդակցման արդյունավետությունը, նրա ազդեցությունը մարդկանց վարքի և գիտակցության վրա, ընդհանուր առմամբ, կախված է այն քաղաքական, սոցիալ-տնտեսական պայմաններից, որտեղ այն իրագործվում է։ Այդ պատճառով մասսայական հաղորդակցման միջոցների

---

[15] Б. Д. Парыгин, Научно-техническая революция и личность, М., 1978, с. 126.

[16] В. Н. Куницына, Человек в мире информации («Социальная психология личности», Л., 1974, с. 159).

օգնությամբ ինֆորմացիայի հաղորդման կազմակերպման ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել հասարակական հոգեբանության վիճակը։ Անհրաժեշտ է նաև, որ մասսայական հաղորդակցման բոլոր տեսակները լինեն փոխկապակցված և հանդես գան որպես վարքի հասարակայնորեն նշանակալից նորմերի մշակմանը նպաստող ռացիոնալ և հուզական միջոցների մի միասնական ամբողջություն։ Մասսայական հաղորդակցումը միայն այս դեպքում կարող է տալ ցանկալի արդյունք։

ОБЩЕНИЕ КАК СОЦИАЛЬНЫЙ ФАКТОР РЕГУЛЯЦИИ ПОВЕДЕНИЯ ЛИЧНОСТИ

АРАМ ХАЧАТРЯН

Резюме

Общение является одним из важнейших условий формирования и существенным фактором социальной детерминации поведения личности. Все формы общения можно свести к двум видам—непосредственного и опосредованного контакта. Непосредственное общение обеспечивает живое взаимодействие между людьми. Но при непосредственном контакте личность остается в кругу ежедневных проблем. Эта ограниченность преодолевается опосредованной формой общения, благодаря чему личность получает возможность взаимодействовать с общей социальной средой. Единство и взаимосвязь непосредственной и опосредованной форм общения способствуют многогранной связи личности со всеми сторонами общественной жизни, благоприятствуют усвоению членами общества принятых в данной среде норм и мотивов поведения, необходимых для социально-значимой деятельности людей.